գեր ալ, առնելով առաջին միաւորը և առաջին երկու, առաջին երեք, առաջին չորս… յաջորդական գումարներուն եզրները՝ կ'ունենանք 1, 4, 9, 16, 25, 36, 49, 81…, կարգերը որ կը կոչուին քառակուսի թիւեր, ուր n երորդ անդամը առաջին n անզոյգներուն գումարն է և հաւասար է $\frac{n}{2}(1+2n-1)=n^2$։

Ասկէ կը հետեւի թէ առաջին անզոյգ թիւերու գումարը 1էն սկսեալ՝ է n^2։

ՕՐԻՆԱԿՆԵՐ ՔԱՌԱԿՈՒՍԻ ԹԻՒԵՐՈՒ





Եթէ առնենք թուաբանական շարքերը, 1, 4, 7, 10, 13, 16, 19…, ուր $d=3$ և իւրաքանչիւր անդամ $= 1+3(n-1) = 3n-2$, և, ինչպէս առաջ՝ կ'ունենանք ուրիշ շարքեր, առնելով առաջին եզրը և յաջորդական գումարները, առաջին երկու, առաջին երեք, առաջին չորս… եզրներուն, կ'ունենանք հնգանկիւն թիւեր 1, 5, 12, 23, 35, 51, 70…, ուր n երորդ անդամի գումարն է 1, 4, 7… առաջին եզրներուն և հաւասար է

$$\frac{n}{2}(1+3n-2) = \frac{n}{2}(3n-).$$

ՕՐԻՆԱԿՆԵՐ ՀՆԳԱԿԱՆ ԹԻՒԵՐՈՒ



Ընդհանուր ձեւը տրուած է հետեւեալ շարքերէն

$$1,\ 1+d,\ 1+2d,\ 1+3d,\ \text{և այլն}.$$

ուր հաստատակաց տարբերութիւնն է d և n երորդ անդամն է $1+(n-1d)$։ Այս շարքերու եզրներուն գումարն է $\frac{n}{2}\left[2+(n-1)d\right] = \frac{n^2 d - n(d-2)}{2}$։ Հիմա եթէ այս ընդհանուր բացատրութեան մէջ, ուրկէ բազմանկիւն թիւերը ծագում կ'առնեն, դնենք $d = 1, 2, 3$, և այլն. կ'ունենանք եռանկիւնային քառակուսի և